

## ԱՄԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ

### ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակն իր հոդվածում անդրադարձել է իրավագիտակցության սոցիալական նշանակությանը: Իրավաստեղծ գործունեության ընթացքում կարևորվում են իրավագիտակցության ոչ միայն իրավական գաղափարախոսական ենթահամակարգերը, այլ նաև իրավական հոգեբանությունը, որը սերտորեն առնչվում է իրավական գաղափարախոսության ինտելեկտուալ և կամային գործառույթների հետ: Իրավագիտակցության դերը իրավունքի իրացման գործում նույնպես հսկայական է և վերաբերում է մարդկանց վարքագծին, որը կարող է լինել ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ:

*Հիմնարանը – իրավագիտակցություն, իրավագիտակցության սոցիալական նշանակություն, իրավական գաղափարախոսություն, իրավաստեղծ գործունեություն:*

Իրավագիտակցությունը կարևոր դեր է խաղում քաղաքացիական հասարակության իրավական կյանքի կատարելագործման և զարգացման գործում: Հատկապես մեծ է իրավագիտակցության դերն իրավական նորմերի ստեղծման և իրավակարգավորման համար: Սկզբում քննարկենք իրավագիտակցության դերն իրավական նորմերի ստեղծման, այսինքն՝ իրավաստեղծ գործունեության մեջ: Ընդհանրացնելով մի շարք գիտնական-իրավաբանների կարծիքը խնդրո հիմնահարցի մասին՝ պրոֆեսոր Վ.Ն. Խրոպանյուկը գրում է. «ԶԷ՞ որ իրավական նորմերը ձևավորվում են իրավաստեղծ մարմինների գիտակցական կամային գործունեության ընթացքում: Նախքան իրավական նորմերում արտացոլում գտնելը, մարդկային որոշակի շահերն ու պահանջմունքներն անցնում են իրավական նորմերն ստեղծող անհատների կամքի և գիտակցության միջոցով: Այդ պատճառով իրավական նորմերի որակը, նրանց համապատասխանությունը հասարակության զարգացման պահանջներին, անքակտելիորեն կապված են իրավական պատկերացումների, իրավական նորմեր ստեղծողների իրավագիտակցության մակարդակի հետ»<sup>1</sup>:

Իրավագիտակցությունը կարող է լիարժեք կատարել իր դերն իրավաստեղծ գործընթացում միայն օբյեկտիվ իրականության գիտական վերլուծության և դրա շնորհիվ ձևավորված իրավական դատողությունների և բանաձևերի միջոցով:

Այդ իսկ պատճառով իրավական գաղափարախոսության առաջին գործառույթը կարելի է բնորոշել որպես իմացաբանական (կամ ճանաչողական): Այդ գործառույթը տարածվում է սոցիալական երևույթների և պրոցեսների լայն շրջանի վրա: Դրանք ամենից առաջ հասարակական զարգացման օրինաչափություններն ու միտումները, հասարակական պահանջմունքները, անհատական և հանրային շահերն են և այլն:

Ասվածը բոլորովին չի ենթադրում, թե յուրաքանչյուր նոր նորմատիվ-իրավական ակտի ստեղծմամբ պետք է հետազոտել հասարակության զարգացման բոլոր օրինաչափություններն ու միտումները:

Խոսքը միայն հասարակական այն երևույթների և պրոցեսների խորքային և համակողմանի վերլուծության մասին է, որոնք ենթակա են իրավական կարգավորման կամ, որոնց վրա ուղղակիորեն կարող են ազդեցություն ունենալ նոր ընդունվող նորմատիվ-իրավական ակտերը:

Սակայն, առանց հասարակական երևույթների և պրոցեսների պատշաճ գնահատման, դրանց դրական (երբ նպաստում են հասարակական առաջընթացին) և բացասական կողմերի (երբ խոչընդոտում կամ կասեցնում են հասարակության զարգացումը) վերլուծության՝ անիմաստ և արժեզրկված է դառնում իրավաստեղծ գործունեությունը: Այսինքն՝ իրավաստեղծ պրոցեսում իրավական գաղափարախոսությունը կատարում է նաև արժեքային (գնահատման) գործառույթ:

Իրավական գաղափարախոսության իմացաբանական և գնահատման գործառույթները ներառվում են իրավական գաղափարախոսության ինտելեկտուալ կողմի մեջ:

Այն հանգամանքը, որ իրավակազմավորման և իրավաստեղծ գործունեության ընթացքում իրավական գաղափարախոսության ինտելեկտուալ-ճանաչողական գործառույթը ինքնանպատակ չէ և հետապնդում է հատուկ կիրառական նպատակ՝ ստեղծել իրական գործող արդյունավետ նորմատիվ-իրավական ակտեր, ինքնաբերաբար ենթադրում է նաև իրավական գաղափարախոսության ակտիվ կողմը, որն արտահայտվում է նրա կամային գործունեությամբ:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է ընդգծել, որ իրավական գաղափարախոսությունն առանց գոր-

ծուն-կամային տարրերի չի կարող գոյություն ունենալ:

Իրավունքը... արդյունք է ոչ միայն իրավական գաղափարախոսության ինտելեկտուալ բովանդակության օբյեկտիվացման, այլ նաև նրա ակտիվ-կամային գործունեության:

Իրավական գաղափարախոսության ինտելեկտուալ և կամային գործառույթների իրականացումը նույնպես ընթանում է փոխկապակցվածության և փոխազդեցության ձևով, որտեղ առաջնայինն ինտելեկտուալ տարրն է, քանի որ կամային գործունեությունը պայմանավորված է ինտելեկտուալ տարրերի ծավալով և բովանդակությամբ:

Սակայն իրավաստեղծ գործունեության պրոցեսում կարևորվում են իրավագիտակցության ոչ միայն իրավական գաղափարախոսական ենթահամակարգերը, այլ նաև իրավական հոգեբանությունը, որը սերտորեն առնչվում է իրավական գաղափարախոսության ինտելեկտուալ և կամային գործառույթների հետ:

Հասարակության զարգացմանը զուգընթաց, իրավագիտակցության դերն աճում է, ինչը սուբյեկտիվ գործոնի դերի աճման բնական հետևանքը, հասարակական կյանքի աճող իրականացման արդյունքն է: Իրավագիտակցության մակարդակի հետ ուղղակիորեն կապված է իրավունքի գործողության և իրավական կարգավորման արդյունավետությունը:

Իրավական կարգավորման մեջ իրավագիտակցության դերը միանշանակ չէ:

«Առաջին՝ իրավագիտակցությունը կարգավորիչ ազդեցություն է թողնում միջնորդավորված, այսինքն՝ իրավական նորմի՝ որպես իրավագիտակցության արտահայտման ձևերից մեկի միջոցով: Իրավական նորմերը մարդկային իրավագիտակցության ստեղծագործության արդյունքն են:

Երկրորդ՝ իրավագիտակցությունն ընդունակ է կարգավորիչ ազդեցություն թողնել նաև անմիջականորեն, քանի որ մարդկանց գործունեության անմիջական իրավաբանական շարժառիթն է և ընդունակ է կողմնորոշիչ ազդեցություն թողնել մարդկանց վարքագծի վրա: Շատ քաղաքացիներ դրսևորում են օրինաչափ վարքագիծ՝ ելնելով իրավաչափության և ոչ իրավաչափության մասին սկզբունքային պատկերացումներից:

Երրորդ՝ իրավագիտակցությունը հուն է, որի միջոցով իրավունքն իրականացնում է իր կարգավորիչ ներգործությունը: Իրավունքի գործողությունն ունի տեղեկատվական բնույթ: Այդ տեղեկատվությունն ազդում է մարդու իրավագիտակցության վրա: Այդպիսով, իրավագիտակցությունը ներառվում և մեկ համակարգի մեջ միավորում է

իրավական կարգավորման ամբողջ գործընթացը»<sup>2</sup>:

Իրավագիտակցությունն իրավունքի նորմերի ճշգրիտ և լիարժեք կենսագործման անհրաժեշտ նախադրյալն է: Իրավունքի նորմերի պահանջներն անմիջականորեն ուղղված են մարդկանց: Այդ պահանջները նույնպես իրականացվում են նրանց գիտակցական կամային գործունեության միջոցով: Եվ որքան բարձր է պետության քաղաքացիների իրավագիտակցությունը, այնքան ճշգրտորեն են կենսագործվում իրավական նորմի կարգադրագրերը: Իրավագիտակցության զարգացումն ապահովում է իրավական պահանջների կամավոր, խոր գիտակցված կենսագործում, դրանց ճշտության և խելամտության ըմբռնում: Մարդկանց մեջ այն առաջ է բերում անհանդուրժողականության զգացում իրավակարգը խախտողների նկատմամբ:

Իրավագիտակցության դերն իրավունքի իրացման գործում նույնպես հսկայական է և վերաբերում է մարդկանց վարքագծին, որը կարող է լինել ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ: Քաղաքացիների մասնակցությունն իրավունքի իրացման գործում մեկ անգամ ևս ապացուցում է գիտակցության և գործունեության անխզելի կապը<sup>3</sup>:

Հաշվի առնելով իրավագիտակցության դերն ու նշանակությունը հասարակական կյանքում՝ անհրաժեշտ է այն զարգացնել և ամրապնդել:

Անհատների, խմբերի իրավագիտակցությունը խաղում է կարևոր կարգավորիչ դեր իրավական բնագավառում: Այն ուղղորդում և կարգավորում է անձի վարքագիծը՝ հիմնված իրականության ճանաչման և օբյեկտիվ գնահատման վրա, որը ներառում է քաղաքացիական հասարակությունում գործող իրավական նորմերի համակարգը և արժեքները:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել մի շարք առաջարկությունների, որոնց նպատակն է ընդունել նոր օրենքներ կամ փոփոխել գործող օրենսդրությունը<sup>4</sup>:

Իհարկե, մնան առաջարկությունները պետք է գիտականորեն հիմնավորված լինեն, բխեն հասարակական զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությունից: Գրականության մեջ կարծիք գոյություն ունի, ըստ որի՝ իրավական դաստիարակությունն անհրաժեշտ է հիմնականում այն անձանց համար, որոնք առնչություն չունեն իրավաբանական մասնագիտության հետ<sup>5</sup>: Սակայն դա այդպես չէ: Գեռևս շատ անելիքներ կան իրավաբանների իրավագիտակցությունը բարձր մակարդակի հասցնելու համար:

<sup>1</sup> Хропанюк В.Н. Теория государства и права. 2-е издание, дополненное, исправленное. - Под ред. профессора Стрекозова В.Г. М., “ДТД”, 1995, С. 205.

<sup>2</sup> Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն - 2: Գաաախսություններ: Երևան, 2011, էջ 235-236:

<sup>3</sup> Гойман В.И. Механизм обеспечения реализации закона в современных условиях. - “Советское государство и право”, 1991, N12; Лазарев В.В. Применение советского прав. Казань, 1972, Решетов Ю.С. Реализация норм права. Казань, 1989.

<sup>4</sup> Բաղդասարյան Ա. Պետական ծառայության հիմնական խնդիրները Հայաստանի Հանրապետությունում. ինչո՞ւ էն անհրաժեշտ բարեփոխումները. - «Օրենք և իրականություն», 1999, N2 (28), էջ 14-18:

<sup>5</sup> Товмасян М. Совершенствование средств массовой информации по освещению деятельности правоохранительных органов - один из основных путей укрепления правопорядка. Гавар, “Сборник научных статей”, 1997, С. 289.

Ամալյա Արուտյունյան

Соискатель института философии, социологии  
и права НАН РА

#### РЕЗЮМЕ

##### *Социальное значение правосознания*

В статье автор рассмотрел социальное значение правосознания. В процессе правотворческой деятельности подчеркиваются не только правовая идеология подструктуры правотворчества, но также правовая психология, которая тесно связана с интеллектуальными и волевыми функциями правовой идеологии. Роль правосознания велика также в реализации права и относится к поведению людей, которая может быть как правомерной, так и неправомерной.

*Ключевые слова:* правосознание, социальное значение правосознания, правовая идеология, правотворческая деятельность.

Amalya Harutyunyan

Applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of  
The National Academy of Science of the Republic of Armenia

#### SUMMARY

##### *Social significance of legal consciousness*

In article the author addresses the social significance of legal consciousness. In law-making activity not only the legal ideological subsystems of legal consciousness, but also the legal psychology are highlighted, which is closely associated with the intellectual and volitional functions of legal ideology. The role of legal consciousness is also tremendous as regards the exercise of the right and it refers to the people's conduct which may be both legitimate and illegitimate.

*Keywords:* legal consciousness, social significance of legal consciousness, legal ideology, law-making activity.